



ԿՃՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԾԱՂՐՈՂՆԵՐՈՒ ՕՌԿԱՆ

Ե Ի

ԱԶԳ. ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՍԱՏԻՐԱԿԱՆ

Ծ Ա Ղ Ի Կ

Որ ամէն բան կը մերկացնէ, չլսածը կը պատմէ, չեղածը կը նկարագրէ, միտք կ'երեւակայէ, կը ձգտէ եւ... Եւրոպականի:
Այս ամէնը կը հաւաստէ, կը դատաւորէ, կը խմբագրէ
Գ. ԲԻՆՈՒԹԻՆԵԱՆ (Բ. ԼՈՒԹԻՆԵԱՆ)

«ԿԱՎՈՐՇ» — «ԾԱՂԻԿ» ԵՂԲԱՅՐԱԿՈՒԹԻՒՆ

— ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ —

Ամէն մարդ դիտել կուտայ մեզ քէ՛ Կաւորշ եւ Ծաղիկ միասին շատ սուղի կը նստին:

— Մենք Կաւորշէն ալ Ծաղիկէն ալ չենք կրնար զատել, կ'ըսենք, բայց զիմեքէնիդ ի՞նչ մը ամանցուցէ՛ք, որպէս զի երկուքին մէկանց բաժանորդ գրուինք:

Մեր բարձրագոյն ասեանք այս փափուկ խնդիրը նկատողութեամբ առնելու համար բացառիկ նիւս մը գումարեց եւ որոշեց հետեւեալ վերջնական սակագինը:

★ Կաւորշ եւ Ծաղիկ միասին, տարեկան, Պոլսոյ համար 80, վեցամսեայ՝ 45 դրու: Կաւորշ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 45 դրու:

Կաւորշ եւ Ծաղիկ միասին, տարեկան, Գաւառի համար 100, վեցամսեայ՝ 60 դրու: Կաւորշ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 60, վեցամսեայ՝ 35 դրու:

Կաւորշ եւ Ծաղիկ միասին, Որսասահմանի համար տարեկան 25 ժր., վեցամսեայ՝ 13 ժր.: Կաւորշ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 15, վեցամսեայ՝ 8 ժրան:

★ Զրի քերթ կուտանք կոր եւ զաւեցաթէրք մանաւանդ:

Բայց ամէն մարդ զիտէ արդէն քէ մենք փարայի համար չենք աշխատիր, —

ո՛հ, քա՛յ յիցի, — այլ Հա՛յ ազգին համար: Կ. Բ. Ի.

ԹԻՒ 32

10 ՓԱՐԱ

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչուշու խան թիւ 7

6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1908 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

زاغيك غزوة مى درعليه غلطه قورشونلى خاندە نومرو ۷

ՄԵՐ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

ԱԶԳԱՅԻՆ... ՓՐԿԻԶՆԵՐ

ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ՝ ՄԵՐ ԱԿՆՈՑՈՎ

ՀԱՅԵՐԸ ԱԼ ՀԱՆԳԻՍՏ ԹՈՂ ՔՆԱՆԱՆ, ԵՐԵՍՓՈՒՄԱՆՆԵՐԸ ՊԻՏԻ ՀՍԿԵՆ

Ազատութեան ծառը տնկեցին Յուլիս 11ին և այսօր Հոկտ. 3, ահա... Լաւիկ... պտուղն է որ կը քաղենք. թէ և բնութեան մէջ երբեք տեսնուած բան չէ որ երկու ամսուան մէջ տնկուած ծառ մը, երկու ամիս և հինգ օր վերջը, անմիջապէս պտղաբերի:

Մեր մէջ սակայն ամէն բան շուտ կը հասունանայ և կ'արդիւնաւորի: Եւ յետոյ ամէն տրուած պտուղ չուտուի ու ուտուելու կարգ չը դասուի: Կան որ նեխած կ'ըլլան, կան որ որդնոտած և կան անանկներ ալ որ անհամ կ'ըլլան և կամ կծու:

Մեր Ազգ. երեսփոխանական Ժողովը ահա Լաւիկ մէկն է ազատութեան ծառին պտուղներէն: Խնդիր չէ և յետոյ վիճարանութեան առարկայ ալ ընելու պէտք չկ'ունենի թէ՛ ուրբաթ օրուան մեղի հրամացուած պտուղները ո՛րքան համով էին. պտուղ ալ կայ պտուղ ալ և վախճամ որ դուռնի կամ շողգամ կամ կաղամբ չքաղենք մեր ծառերէն: Թնդանօթ նետեցէք...

Ուրբաթ օր մեր երեսփոխանները դուռնարուեցան:

Մեր երեսփոխանները դուռնարուեցան ուրբաթ օր:

Գուռնարեցան ուրբաթ օր մեր երեսփոխանները:

Մեր երեսփոխանները...

Այո՛, միտնէ՛ք դուռնարուեցան. ես հոն էի իբրեւ Գուրչուշու խանի երեսփոխան, բայց ինչպէս ես նոյնպէս մեր միւս յարգելի երեսփոխանները կամ աւելի ճիշտ թաղեցիներու և գաւառացիներու երեսները փոխ առնողները, ժամը 7ին ներս մտան Մայր Եկեղեցիէն և 11ին դուռն ելան... Կաթողիկոսական պատգամաւոր մը ընտրելով:

Եւ ըսել թէ մեր Ազգը յառաջ չերթար:

Քրէական յանցանք մըն է այսպէս խորհիլ:

Կրիայի արագութեամբ կը սուրանք:

Ատենանը բացուեցաւ. բայց զոգէ՛ք զի Ժողովին մէջէն անպակաս ըլլայ Հոգին Սուրբ, Տեղապահ Սրբազանը պէտք տեսաւ «Հայր մեր» մը:

Ալ չեմ գիտեր թէ անկէ անդին Քրիստոս երեսփոխաններու մէջ նուա՞տաւ թէ ո՛չ: Որովհետեւ մեր մէջ երեսփոխան եղողը Քրիստոսն ալ բանի տեղ չդնէր. եթէ քիչ մըն ալ բերանը բանալ տաս կը յայտարարէ թէ՛ ա՛մէն բան իր իրաւասութեան տակն է, նոյն իսկ... Ամենատուրը երբոր դուրսիւնը:

Չափազանց է պիտի ըսէք. հոգ չէ: Թո՛ղ գործ տեսնան և ինքզինքնին... երկրային աստուածներու տեղ դնեն:

Ատենանը բանալէ վերջ, բաւական դժուարին աշխատութիւն մը, տեղապահ նստաւ և սպասեց: Յետոյ Ռեթէնս էֆ. Թագէտեանի ձեռքը զանգակ մը տուին և չարժէ ըսին: Ռեթէնս էֆ. կէտ առ կէտ գործադրեց այս հրամանը և սկսաւ զանգակը շարժել... որուն ամէն մէկ շարժումին՝ ըովս նստող երեսփոխան մը կը կարծէր թէ իրենց թաղին փերեզակն է որ կ'անցնի:

— Կը սխալիս բարեկամ, ըսի, խելքդ գլուխդ բեր, պատկառելի Ժողովին ատենապետին ձեռքը գրտնուող զանգակ մը երբեք բաղդատութեան չկրնար դրուիլ... Ժողոցային և հասարակ զանգակի մը հետ: Մէկը յաճախորդ կը հրաւիրէ, իսկ աս... ի կարգ:

Քովինս բերանը խփեց և նստաւ. սահմակած էր:

Ժողովը յետոյ դժուարութիւն սկըսաւ:

ՎՈՐՄՇԱՊՈՒՀ էֆ. ՄԱՆՈՒԿ ԵԱՆ. — Խօսք կ'ուզեմ, ըսաւ:

ՀՈՐՈՑ (արթննալով). — Ե՛ս ալ խօսք կ'ուզեմ:

ԸՆԿԵՐ ՄՈՒՐԱՏ. — Ինձի ալ խօսք տուէք:

ՏԱՂԱՒԱՐԵԱՆ. — Ինձի ալ պէ՛. խօսքն ալ փարայով չէ ա՛. քանի՛ փարա է նէ կուտամ...

Եւ կոչա խօսք ուղեցին Ատենապետէն, որ նկատելով թէ իրմէ փարա չէին ուղեր, այլ խօսք... ուղածնուն չափ տուաւ: Ու բերանները բացուեցան... ա՛լ կրնաս նէ գոցէ: Հորոյ իր օրհնեալ բերանը բացաւ և կէս ժամ վերջը գոցեց... յօրանջելով: Ի՛նչ ըսաւ. ըսաւ վերջապէս բաներ մը. լաֆ. խօսք. կրնայ ըլլալ որ ըսածները պոչ լաֆ եղած ըլլային, բայց մարդը կը կարծէր որ պոչ լաֆերն ալ իրենց օգտակարութիւնը ունին: Հորոյ առաջարկեց նաեւ որ Կաթողիկոսական պատգամաւորը փարալը մարդ ըլլայ: Մինչեւ այդ ժամուն Հորոն կը պաշտէր... այդ օրէն և այդ ժամէն սկսեալ, պաշտածս այրիւ սկսայ:

Երեսփոխաններէն շատեր կը քնանային արդէն. մէկը քիթը կը խառնէր. երկու երեսփոխան... նշանատուքի մը ետ ըլլալու պարագաներուն վրայ կը խօսէին. 35 հոգի բերանին բաց մտիկ կ'ընէին և կ'աշխատէին որ ըսածներէն բան մը հասկընան. թէ և շատ աղէկ գիտեմ որ այսօր բան մը չհասկնալէ դատ, վաղն ալ, գուցէ յաւիտեանս յաւիտենից բան մը հասկնալիք չունին:

Ու անհատնում կը ճառէին. միշտ խօսք կ'ընէին. խօսք ուղողը երբ խօսքը ստանար, ոտքի կ'ելէր. կը հաղար. առջևի նստողին աթոռը

կը բռնէր. վայրկեան մը ձեռքի եւ զունգներուն կը նայէր, հեղ մը գլուխը կը շօշափէր... նայելու համար թէ ի՞ր տեղն է արդեօք, նորէն կը հաղար և կ'սկսէր: Շատեր կ'ըսէին բայց չէին կրնար վերջացնել. ուստի ես պիտի առաջարկեմ որ Ժողովը չբացուած քանի մը քիւօ, ու է գրաձուլիչէ մը վերջակէտ դրուի Ժողովին մէջտեղը, որպէս զի նեղը մնացող երեսփոխանը անմիջապէս վերջակէտը դնէ: Ումանք ալ ներս կը մտնէին իրենց նիւթին մէկ կողմէն և առանց դուրս ելլալու կը նստէին:

Այսպէս անցաւ Ժողովը, Ազգային Պատկառելի Երեսփոխաններու Առաջին Ժողովը, վերջացաւ ժամը 9 1/2ին... Ուրիշ խնդիր որ 9 1/2ին վերջացաւ առժամապէս և տասը վայրկեանի չափ երեսփոխանները ծխեցին, ծարաւնին անցուցին, բնական պէտքերն հոգացին և ինքզինքնին բանի վրայ ցոյց տալու համար:

— Էֆէնտիմ. ա՛ղ սխալ է. ասանկ ըլլայ նէ ասանկ չըլլար. ես չըսի՞. դո՛ւն չըսիր. մե՛նք չըսինք. անոնք չըսին, այո՛ էֆէնտիմ. միշտ անանկ եղած է... »:

Տասը վայրկեանը անցաւ.

Բարերգիքի Ատենապետը... զանգակը հնչեցուց ճիշդ... Բարերգիքի մը... պէս. Երեսփոխաններ իրենց աթոռները գրաւեցին. այս անգամ փոխանները և շանժե քչաւ... մը ըրած էին: Կարինի երեսփոխանը նուա Գաղատիոյ երեսփոխանին տեղը, Ֆերիզիւղին նստաւ. Բեթթաճիայի տեղը և Զոնկուլտաքի երեսփոխանը տեղ չգտնելով... ոտքի վրայ մնաց: Ժամը 9 1/2ին մինչև 11 դարձեալ շարունակեցին:

Խօսք կուզեմ.
Խօսք կուզեմ.
Խօսք կուզեմ.
Խօսք կուզեմ.
Խօսք կուզեմ.
Խօսք կուզեմ.

Ամբողջ կուղեմձի. բացի մէկ քանիներէն որոց թաղեցիները և կամ վիճակայինները կ'երեւի երբեք բանի մը պէտք չունենին և բան մը չէին ուզեր:

Հորոյ դարձեալ բարրաւեցաւ:
Հմայեակ եպս. բանաստեղծութիւն մը բրաւ... բանաստեղծական ոճով, որուն մէջ 13 ա՛հ, 8 ա՛խ և 6 աւա՛ղ կար: Ուրիշ բաներ ալ կային, բայց բանաստեղծական ցայտուն կէտերը ասոնք էին:

Հմայեակ քահանայ ոտքի ելաւ և մայր դիւան. նստաւ դարձեալ մայր դիւան. ելաւ մայր դիւան. դարձեալ նստաւ ու դարձեալ ելաւ. միշտ մայր դիւան:

Ժողովականներէն զատ, իրրեւ աւամթեօւ, մեկուսի ճառ մը խօսեցաւ Արշակ Ալպոյաճեան, որ կրակ կըտրած էր թէ... բայց հասած անմիջական օգնութեանց չնորհիւ կարելի եղաւ այդ կրակը մարել...: Մաղթենք որ այս տեսակ հրդեհներ չուտ մարին, քանի որ չենք յուսար որ Մայր եկեղեցին ապահովագրուած ըլլայ:

Տաղաւարեան անանկ խօսքեր մը ըրաւ, որով կարծես ըսել կ'ուզէր թէ՛ ի՛նչ կ'ըլլայ, Օրմանեանը ընտրենք կ'աթողիկոս: Զարգարեան կրակ կարեցաւ՝ կռահելով այս տեսակ թաւալուն գաղափարներն ունեցող մէկ քանի երես... փոխողներու միտքը:

Շատեր իրենց գոյնը դուրս տուին... ոմանք լեզունին իրենց քաշեցին և շատեր ալ իրենց լեզուն ա՛յնքան երկարեցին որ... քովերին նստողները իրենց երեսներուն լըզուըռուտիլը զգացին. իսկ մէկ քանիներ պատճառ եղան որ ժողովաւանները հովանոց բանան. հովանոց չունեցողները բաւական թրջուեցան... ևրեսփոխանի մը թուքի անձրեւէն:

Եւ ժողովը վերջացաւ ժամը 11ին:
Զորսուկէս ժամուան մէջ ժողովը կաթողիկոսական պատգամաւոր մը ընտրած և կիլիկիոյ կաթողիկոսին քառորդ պաշտօնական եղող մէկ հեռագիրը կարդացած էր:

Երեսփոխանները թէեւ ատեն աւտեն աթոռ նետելու փափաքներ ունեցան, բայց... միայն փափաք. ուրովհետեւ նախապէս ղեկուցուեցաւ որ, երեսփոխաններէ ոմանց գլուխը ապահովագրուած չէր...: Կը յուսանք և կը սպասենք որ յաջորդ նիստին... ապահովագրուած գան այդ գլուխները:

Խմբագրեցեալ
24րդ ԱՌՈՌ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ. — Եր. Տէր Անդրէասեան որ իրրեւ Պարտիզակի հաւաքատ զաւակ... իր ծննդավայրը պիտի պաշտպանէր, յաջորդ նիստէն սկսեալ Զարսանճագ-Զաջաճագցիներու ընդ պիտի պաշտպանէ: Տրապիս զոնցիներէն շատ աւելի խելացի են եղեր Զարսանճագցիները: Ասկէ վերջ Հորոյ գործ ունի:

ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԺԱՄ. — Յաջորդ նիստը պիտի գումարուի... յաջորդ անգամ:

ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԺԱՄ. — Կարգ մը երես... փոխողներ իրենց բուն երեսը երեսփոխանական սրահին մէջ մոռցած ըլլալով... կր խնդրուի գտնողներէն որ հաճին խորագրաւ տունս յանձնել: Վարձքերնին Աստուծոյ պիտի առնեն:

ԿԷՍ ԳԻՇԵՐ. — Մայր եկեղեցիի թաղ. խորհուրդը որոշեց մայր տաճարին կանթեղները և ջահերը կամ վար առնել և կամ երեսփոխաններու աթոռները գետինը դաժել...:

ՆՈՅՆ ԱՌՈՌ

ԹԵԼԵՖՈՆԻՆ

ԲԱՐԻՓՆԵՐԸ ԵՒ ԶԱՐԻՓՆԵՐԸ

Թերթերը գրեցին թէ Կ. Պոլսոյ մէջ թէլեֆոններ հաստատուելու արտօնութիւնը պիտի տրուի ա՛յն ընկերութեան, որ է՛ն նպաստաւոր պայմանները պիտի առաջարկէ: Կը հասկնամ թէ կառավարութիւնը իրաւունք ունի է՛ն նպաստաւոր պայմանները ընդունելու, բայց ի՛նչ որ միեւնոյն ատեն կը հասկնամ, ա՛յն է թէ թէլեֆոն մեր կեանքը պիտի վրդովէ և է՛ն սիրով աժոններուն միջեւ գծտու թիւն պիտի սերմանէ:

Այո՛, պարոններ:
Երբ թէլեֆոնը հաստատուի, ա՛լ լմնցան այն ուշադրանքներն ունեցողները, զորս էրիկները կը կըլեցնէին իրենց կնոջ:

— Սիրելի՛ աժուսինս, ժամը քանի՛ն ելար գործէդ:

— Ժամը 12ին:

— Ախա՛, ես թէլեֆոնով հարցուցի վարպետիդ. ըսաւ որ կէսօրին տուն գալու համար ելեր ես գործէդ: Մինչև հիմա ո՛ր էիր նայինք:

Ա՛լ թէլեֆոնին երեսէն լմնցան ménage à troisները: Ամուսին մը կասկածելուն պէս թէ իր կինը իր լաւագոյն բարեկամին հետ իր ճակատը զարգարելու կ'աշխատի... անմիջապէս թէլեֆոնին մէջ իր լաւագոյն բարեկամին ձայնը պիտի կեղծէ:

— Ալլօ՛, ալլօ՛, դո՛ւն ես, սիրելի՛ս:

— Դո՛ւն ես, սիրելիս:

— Այո, ես եմ:

— Մտիկ ըրէ ուրեմն. էրիկս այս առտու դնաց և գիշերը պիտի վերադառնայ, քիչ մը ժամանակ ունինք սիրուըտելու, չո՛ւտ կկո՛ւր... Եւ ամուսինը կը հասկնայ թէ ինչ չո՛ւ ժամանակէ մը ի վեր իր ճակատը բռնաւորուած կը զգար:

Բայց ասոր փոխարէն ի՞նչպէս չիլի թէլեֆոնին բարեքները:
Ի՛նչ պէտք ունիք թատրոն երթալու. տուններնիս կը նստինք, թէլեֆոնին մէկ ծայրը կը գնենք թատրոնին յուշարարին ծակին քովը, և առանց թատրոն դացած ըլլալու թատրոնին ներկայ գտնուած կ'ըլանք:

Խմբագիրները ասկէ վերջ պէտք չունին ամէն օր մինչեւ Պատրիարքարան ճամբայ քաշելու:

— Ալլօ՛, ալլօ՛, սրբազան... կ'ըսեն թէլեֆոնին մէջէն:

— Հրամայեցէք, տէր խմբագիր:

— Այսօր ո՛ւր պիտի երթաք:

Խմբագիրը լուր կ'առնէ կը տպէ և... կօշկները հինցուցած չըլլար: Ենթադրենք թէ մէկու մը հայհոյելու փափաքը ունիք, բայց չէք համարձակիր երես առ երես հայհոյել, վախճալով որ չեղի գլուխիդ իջեցնէ իր կօշիկը:

Այն ատեն ի՛նչ կ'ընէք:

— Ալլօ՛, ալլօ՛, կը պօռաք թէլեֆոնի պաշտօնեային:

— Հրամայեցէք, կը պատասխանէ ան ձեզի:

— 538ը տո՛ւր ինծի:

Եւ այս կերպով կը սկսիք ձեր ուզած մարդուն ականջին խողովակին մէջ պոռալ.

— Է՛յ, աւանակ, ապո՛ւշ, ցտաւազար...:

Այս կերպով սիրտերնիդ կը փռահնայ և մարդը չի կրնար ձեր զըլխուն բան մը իջեցնել:

Պիտի ըսէք որ դատ կը բանայ:

Ձի կրնար, պիտի պատասխանեմ, քանի որ իրմէ զատ ոչ ոք կը լսէ ձեր ըրած հայհոյանքները:

Ծեծի կը վազէ վրանիդ:

Ա՛ պահ, մինչեւ որ ձեր տունը վազէ ձեծի՛ արդէն բարկութիւնը իջած կ'ըլլայ:

ԱՆՎՈ՛, ԱՆՎՈ՛

ԿԱՌՍՈՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Խալըպճիներէն, թրամվայճիներէն, սալիքիներէն վերջ՝ կառսոնները...

Եթէ ասոնք պակաս մնային խաբար կը մնար:

Ասոնք ալ ազացուցանելու համար թէ կառսոններն ալ մարդ են, կրէ՛վ ըրին, որովհետեւ այսօրուան օրս մարդ լլալու ազացոյցը տալու համար պէտք է անպատճառ գործադու ընել:

Առջի օր Սրբախորհրդին վիճակը ultra comique էր. — Բոլոր կառսոնները իրենց վերջին հրաժեշտը տուած ըլլալով — Առ թողաթիւան Մկրտիչ, Թօգաթիւանի բարեկամներն էին որ իրենց սիրայօժար մասնակցութիւնը նուիրեցին... կառսոններու փոխանորդելու համար:

Եւ ասիկա ձրի չէր, քանի որ... քառապաշտներէն իրենց բաժինը առին անշուշտ:

Ամաթէօր դերասաններէ վերջը ամաթէօր-կառսոններ...

Ասկէ ետքը ամէն բանի ամաթէօրը պիտի ունենանք:

Ես չեմ կարծեր որ ամաթէօր կառսոնները դժգոհ մնացած ըլլան իրենց այս նոր արհեստէն, քանի որ բաղմուրիւնը — ինտուրնա — շատ ըլլալով՝ բաւական առատ պախշիչ հաւաքուեցաւ:

Լեւոն Ղաղարոսեան, մեր այդ վիթխարի բարեկամը, որ թէ լուսանկարիչ է, թէ՛ գոմիսիօնէր, թէ՛ կազմի, թէ՛ էլէքթրիքճի և դեռ վերջապէս բոլոր ա՛յն բաները որոնց մէջ զրամ կը շահուի պատուաւորա-

պէս, chef des garçons էր եղած: Կը լսենք թէ ա՛յնչափ դո՛հ էր մնացած իր նոր պաշտօնէն, որ իր միւս մասնագիտութիւններուն վրայ կառսոնութիւնն ալ պիտի աւելցնէ եղեր:

Ճարտարապետ Աւետիսեան բաւականա՛ որ իր ճարտարապետական տաղտուկներէն դեռ հազիւ պրծած էր, կառսոնական պայմանագրական ըզմօրինկը հազած և անձեռոցը ուսին նետած զարեջուր և օղի կը տանէր կը բերէր: Թոքաթիւան կառսոնութեան առաջին մրցանակ տուաւ Աւետիսեան բարեկամիս՝ իր բարեք ծառայութեանը համար:

Առջի օր Սրբախորհրդին մէջ սիրայօժար կառսոնութիւն ընողները ամբողջ տարի մը ձրի խմելու և ուտելու իրաւունք ստացան:

Պիտի փափաքէիք հասկնալ անշուշտ թէ ինչո՛ւ կառսոնները գործադու ըրին:

Ահա՛ իրենց նաղադրոյն պահանջները.

1. Պ. Պ. կառսոնները կը պահանջեն որ երբե՛ք Թոքաթիւան իրաւունք չուննայ զիրենք վճարելու: Իրենք ի՛նչ ալ ընելու ըլլան, կառսոնները իրաւունք պիտի ունենան Թոքաթիւանը վճարելու, բայց ո՛չ Թոքաթիւանը՝ զիրենք:

2. — Կառսոններու սէնտիքային չարձանագրուած կառսոն մը չպիտի կրնայ երբե՛ք կառսոնութիւն ընել, որպէս զի սէնտիքային անդամները ուղածնուն պէս կարենան չահագործել բաթրոնները:

3. Կառսոնները իրաւունք պիտի ունենան իրենց ուղածին պէս խաւը զրիշալիշ ընելու իրենց յաճախորդները: Երբ յաճախորդները չը կրնան իրենց ներկայացուցած խաղըխները, իրենց բաթրոնը պարտաւոր պիտի ըլլայ սու մէլ:

4. — Կառսոնները իրաւունք կը պահանջեն սուրճը բերած ատենին մէջ փողոտայու և կերակուրի պընակներու մէջ իրենց պիւսերուն ինչ-չոր ձգելու:

5. — Կառսոնները իրաւունք կը պահանջեն առտուընէ մինչև իրիկուն ոտքի վրայ չկենալու. յաճախորդին զիմացը պիտի կրնան նստիլ և երբեմն ձնկել ալ. այս դէպքերում բաթրոնը չպիտի կարենայ բան մը զրուցել:

6. — Կառսոնները կը պահանջեն որ յաճախորդին առաջին կոչերուն անմիջապէս պատասխանելու պարտաւոր չըլլան. — յաճախորդը կրնայ ուղածին չափ կառսոն կանչել, կառսոնը միշտ իր ուղած ժամանակը պիտի երթայ՝ յաճախորդին փափաքը հասկնալու:

7. — Յաճախորդները իրաւունք չպիտի ունենան բողոքելու, երբ իրենց ապսպրած բանը ուշանայ կամ բնաւ չգայ. վերջին պարագային՝ տառնց ապսպրուածները խմելու և առանց բաթրոնին գանգատելու, չը խմածնուն գինը վճարելով պիտի ելին երթան:

8. — Այն յաճախորդը որ կառսոնի մը դէմ պիտի գանգատի, բաթրոնէն ոտքի հարուածներով պիտի վնասուի և մէյ մըն ալ ներս չպիտի առնուի:

9. — Կառսոնները պիտի կրնան իրենց գործին գլուխը թերթ կարգաւ, վիճարանիլ և նոյն իսկ թերթերու աշխատակցիլ, եթէ յօդուածագիրի տաղանդով օժտուած են:

10. — Կառսոններու տրուած պահույնները 20 փարա չպիտի ըլլան, այլ 50 % բաժնեկցի պահանջներ: Այն յաճախորդը որ 20 զրոյ ի բան կ'ուտէ, կը խօսէ և 10 զրոյ ալ բաժնեկցի չի տար կառսոնին, պիտի վտարուի վերջնական կերպով:

11. — Կառսոնները կը բողոքեն կառսոններու բարտաբաւ կամ բաւթօ բռնելու նուազագոյն սովորոյթին դէմ, և բաւթօ կամ բարտաբաւ բռնելու դէմ պայքարել կը կադմակերպին: Թող յաճախորդները իրենք իրենց հագնին իրենց բաւթօն:

12. — Վերջապէս կառսոնները իրաւունք կը պահանջեն յաճախորդներէն ներս հետ դարպասելու: Իսկ երբ իրենց մէջքէն է որ կուգայ իրենց խանութը, անոր խոսքին կամ կերպին փարան չպիտի պահանջէ բաւթօնը, նոյն իսկ եթէ օթել մը կայ վրան, երկու հոգինոց անկողին մըն ալ պիտի յատկացնէ:

★

Մկրտիչ Թոգաթիւան մերժեց ըստորագրել իր կառսոններուն այս... նազադագոյն պահանջները:

Թոգաթիւան որոշած է կին կառսոններ գործածել. — այս կերպով թէ՛ գործադուլի վախէ մասամբ կ'ազատի և թէ՛... յաճախորդները դո՛ւ կը մնան:

ԸՆԴՆԵՐ ԹՕԹՕ

ՕՐՈՒԱՆ ՂԵՊՔԵՐ

ՅԱԿՈԲ ՏԵՐ-ՅԱԿՈԲՅԱՆԻՆ
(Մեքիմը)

Երէկ երեսփոխան մը քիչ մնաց Գուգարուի մէջ կառքի մը տակ մնար: Բարեբախտաբար ուրիշներ կառապանին դիտել տուին որ... մինչև այժմ այդ մարդը խօսքի տակ չէ մնացել և հետեւաբար պատճառ մը չկայ որ... կառքի տակ մնայ:

★ Կոչկաներկ Ալի և քրջահաւաք Մէհմէտ, զիցուհիի մը համար կուր մղեցին: Ալի իր դաշոյնը սիրտը մխեց Մէհմէտի, բայց որովհետեւ Ալի չէր գիտեր թէ սիրտը ա՛յլ թէ ձախ կողմը կը գտնուի, չկրցաւ սրտին զարնել: Եւ Մէհմէտ չմեռաւ: Ալի որոշեց ասկէ վերջ նախ սրտին ո՛ր կողմը գտնուիլը սորվիլ և յետոյ զարնել:

★ Առջի գիշեր Մահուսէի շոգենաւները կէս ճամբան գործադուլ ըրին. մեքենավարները և նաւագետները շոգենաւին քով գացին և նախ աղաչեցին, համոզել ջանացին և յետոյ սպառնացին, բայց Պ. Պ. շոգենաւները պնդեցին որ իրենք այլ եւս չեն աշխատիր և թէ հանգստեան կոչուելու պէտք ունին:

★ Զիաւոր մը անցեալ օր կոխտեց յոյն սպանին մը որ թրքուհիի մը հետ սիրահարութիւն ըրածի երեւոյթը ունէր:

★ Գումագարուի մէջ արիւնսալի

կուր մը պատահեցաւ: Արիւնը գետակի պէս կը հոսէր: Բաղմութիւնը սարսափահար օգնութիւն կ'ազդարարէր: Վերջէն ուշադրութիւն ըրին և տեսան որ արիւն չէր վաղածը, այլ... տակաւի մը ծորակը բաց մնացած ըլլալով գինի էր... հոսածը:

★ Խառնուող մը երբ կը փորձէր Ոսկեղջիւրի շոգենաւներէն մէկը նստիլ, յանկարծ զգաց որ նաւամատոյցը տակէն կը փախչի կոր: Ոստիկանութեան լուր տրուեցաւ որպէս զի հետագայից նաւամատոյցը և արդարութեան յանձնէ:

★ Ոստիկանութիւնը կը ծանուցանէ թէ վերջապէս յաջողութեամբ բռնել Խառնուողի փախող նաւամատոյցը, որ այժմ բանտարկուած է Կեդր. բանտին մէջ: Կ'ըսէ թէ միշտ պիտի աքսորուի:

★ Մայրաքաղաքի մէջ կան կարգ մը բարի մարդիկ, որոնք զիշեր ատեն դուրս կ'ելլեն միայն և ասոր անոր գրպանները իրենցինն հետ կը... չփորձեն: Առջի օր այս կարգի բարի մարդոց մէկը ուղեց Հրեայի մը գրպանը խառնել. Հրեան ընդդիմացաւ. բարի մարդը բարկացաւ և քիթը կտրեց Հրեային: Ոստիկանութիւնը Հրեային բողոքին վերայ ձերբակալեց բարի մարդը և քիթը անկէ առնելով վերադարձուց տէրոջը: Այս արդար դատաստանին ըսելիք ունի՞ք. եթէ գողցուածը դուրս ըլլար՝ Հրեան չէր կրնար դրամը վերստին ձեռք բերել: Թող աղօթք ընէ որ քիթն էր գողցուածը:

★ Անցեալ գիշեր Մաքրիգիւղի Հայ մը՝ Վարիէթի մէջ խենթեցաւ... անգլուհիներու սրունքները տեսնելով: Կը խնդրուի չտեսներէն որ Վարիէթէ երթալու տեղ... ժողովարան երթան:

★ Երէկ առտու անփորձ մարդ մը չ'արեւնալով պարտքի մէջ լողալ... խեղդուեցաւ: Քաղաքագետութիւնը որոշեց ազատաբար գոտիներ հաստատել, համարակ լողացողներու համար:

ՎՈՒՐՆԱԼՅՈՑ

ԱՊՏԱԿՆԵՐ

Ջալիլ, բայց մտիկ ըրէ՛:

Բոսոս, Պէշիքթաշի դէպքին վրայ խօսելով, մենք Հայերուն չենք նմանիր կ'ըսէ. մենք, մարդը... կ'ուտենք: Անուշ ըլլայ. աչք չունինք, մեր փորը կուշտ է:

★

Իզսաւ ալ կ'ըսէ թէ Պէշիքթաշի այդ վայրենութիւնը ընողները «Պիր սիւրիւ հայվաւար» էին: Լաւալիս. եան ճշմարտութիւն, մենք արդէն գիտէինք: Նո՛ր բարի լոյս:

★

Բ. Դուռը որոշեց բողոքել Պուլկարիոյ անկախութեան դէմ: Քանի մը շաբաթէ ի վեր այնքան բողոքեց որ դիւանագիտութեան մէջ կատարեալ թողութեան մը եղաւ:

★

Պուլկարիոյ կողմէ հոս քաղաքականի մը պիտի զրկուի որպէս զի բացատրէ Պուլկարիոյ ռզդութիւնը: Ինչ զանկո՞ք, արդեօք կը կարծէ թէ

իր ռզդութիւնը չէ՞ք գիտեր: Մենք Թուրքիացիներս ամէն բան գիտենք, նոյն իսկ մեր չգիտցածներն ալ գիտենք...:

★

Մայրաքաղաքի մէջ հինգշաբթիէն վերջ Թուրք խուժանը, «պիր սիւրիւ հայվաւար» ըստ Իզսաւի, Գրիստոնեայ չբղքեցին... Թրքուհի մը սիրած ըլլալուն համար. կը կարծուի թէ ոստիկանութեան նախարարութեան պատուանշան մը պիտի տրուի վաղը:

★

Պատրիարքարանը գիշեր ցերեկ Հայաստանի սովելոց նպաստ հասցընելու միջոցներուն վրայ կը մտածէ: Սովետներուն օգնելու համար ճամբայ մըն ալ ես կ'առաջարկեմ, այն է՝ սովետալ զաւաճեցնել հեռացնել այն մարդիկը որ շատ կ'ուտեն: Հետեւապէս կ'առաջարկեմ որ բոլոր առաջնորդները, տեղապահները և վանահայրերը Պուլիս կանչուին, որոնք ամբողջ վանքեր մէկ անգամէն կը կլլեն:

★

Աշխարհիս մէջ ժամանակն է որ ամէն բան կ'ընէ. ասոր համար ժաւնաւորը այսօրեւս կ'սկսի հրատարակուիլ Գաւաթի կողմէ որպէս զի... բան մը չընէ: Ասկէ վերջ ո՛վ որ ժամանակ չունի, թող ժաւնաւոր մը առնէ և պօլ ժամանակ կ'ունենայ:

★

Թաղ. Խորհրդարանի մը բակին մէջ եմ անցեալ կիրակի առտու: Մեծ քաղմութիւն մը երկսեռ: Մարդ մը որ Հայ էր, կը ձերբակալուի գողութիւն ըրած ըլլալուն համար: Քանի մը աղագայիններ կը հարցաքննեն. — Ո՛ւսկից ասիւր աս երկու ոսկին: — Թապալսէն առի: — Ինչո՞ւ առի: — Ինչ կ'ըլլայ եղբր առնելով: — Գողութիւն եղած կ'ըլլայ: — Ե՛ս գող չեմ: — Ինչո՞ւ առի և գրպանդ գրիր: — Նախորդ Թաղ. Խորհրդոյ անգամներէն եմ ես:

— Սո՛ւտ կը խօսիս. դուն թաղական եղած չես. ենթադրենք որ եղած ըլլաս. ի՛նչ ըսել կ'ուզես:

— Սա ըսել կ'ուզեմ որ, Թաղական Խորհրդոյ անգամ մը կարող է այդպիսի բան մը ընել՝ առանց գող ըլլալու:

Հարցաքննող աղագայինները պատասխանը գոհացուցիչ գտնելով, մարդուն ճամբայ տուին:

★

Լոնտոնէ լուր կը հասնի եղբր թէ Ռուսիոյ և Անգլիոյ միջև համաձայնութիւն գոյացած է Տարտանէի ներդրոյին մասին, հիմ ունենալով միջին լուծում մը:

Ծաղիկ. — Մենք այս միջին լուծումը չ'սպեցանք: Արդեօք ի՛նչ ըսել կ'ուզեն:

★

Արեւելեան տագնապը լուծելու համար օտար տէրութիւնները երկան բարակ ծախք պիտի ընեն, դեպքանախորհրդ պիտի գումարեն: Ես կ'առաջարկեմ որ փոխանակ այդքան ծախքերու քանի մը չիլ վիրապապուս

կամ եանօս զրկուի իրեւ լուծողական և անգամ մը որ արեւելեան տագնապին փորը... Ելլէ, խնդիրը կը լուծուի ինքնին:

★

Ղալաթիոյ հրապարակին վրայ գտնուող հանդերձի վաճառատունները սկսած են դարձեալ գործ ընել: Թեթեւօլիկ երիտասարդներուն աչքը լոյս, դարձեալ կրնան սիրաբանել նոյն վաճառատուններու վանհօգնութուն հետ:

★

Ֆէրիգիւղի մէջ հաստատուած գարեջուրի աւտորիական գործարանը, Պոմօնթի, իր Հայ պաշտօնեաները ամէնքն ալ ճամբեր է: Հետեւաբար մենք ալ կը յանձնարարենք մեր բոլոր Հայ աղգին, որ յանուն ազգասիրութեան անգամ մըն ալ ոտք չկոխեն ոչ միայն Ֆէրիգիւղի բարձունքին վրայ հաստատուած գարեջրատունը, այլ և կարելի եղածին չափ բերան դնելու չէ անոր գարեջրուր: Անկցի՛ Պոմօնթի գարեջրատունը և իր գարեջուրը:

★

Թօգաթիւանի մէջ ճաշ ընողներէ կը խնդրուի՝ հովանոցին միշտ գըլխընուն վրայ բաց բռնեն, որպէս զի կերակուրին և վրանին գլուխին չթրջի:

★

Մայրաքաղաքիս թաղերէն մէկուն քահանան (Այս անուն) եկեղեցիին մէջ գանձանակէն մէծիտիէ մը սխալմամբ գրպանը նետած պահուն ընկերը տեսաւ: Կէս ժամ վիճաբանութենէ ետքը Մեծիտիէն հաւասարապէս բաժնեցին... իրենց մէջ:

★

Բերա Բալասի բոլոր պաշտօնեաները և սպասաւորները գործադուլ ըրին, և մինչև որ Բերա Բալասի բոլոր շահը իրենց չտրուի, գործադուլը չպիտի վերջացնեն:

★

Երկու Հայ աղջիկներ, Էլպիս Բըլանթի, Քէօթաշիայի մէջ կ'առեւանգուին Էտիքէի բանակին ծայր գունդին սպաններէն Իպրահիմ Օսմանի կողմէ: Պէշիքթաշի մէջ յոյն պատանին վայրենաբար մեղքողները ո՛ւր են արդեօք. նոյն բանը կ'ուզեն որ նոյն տեղի քրիստոնեաները ընեն. ե՛տ վերադարձնելու է այդ աղջիկները, եթէ ոչ...:

★

Պէշիքթաշի քրիստոնեաները մեծ յանձնարարութիւններ ըրին առաջադրածներուն... փայտէ գլուխներ չինել տալով. եթէ սօֆթային մէկը յանկարծ անոնց պլուխը կտրէ՝ բնաւ հոգ չպիտի ընեն. անմիջապէս փայտէ գլուխը պիտի անցնեն: Որովհետեւ աւելի լաւ է փայտէ գլուխով պտըտիլ... քան առանց գլուխի:

★

Սա գաղթականները այլ եւս երթալով չափը կ'անցընեն. ո՛ւր ենք բարեկամներ. ամէն բան չափ մը, կանոն մը ունի. եկեղեցիին մէջ ալ կուր և միայն կուր. դեռ ինչեք... ըրեր են: Ամօ՛թ է, ամօ՛թ:

ՎԱՂԸ «ԿԱՎՈՐՇ»

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ա. ՍԱԳՆԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳՆԱՆ



ՎԱՅԵԼՉԱՍԷՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ՝ՈՒՋԵՆ ՊԱՇՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԷՏՔ Է ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱԾԵՆ

ՃՇՄԱՐԻՑ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ՎԼԻՍԷՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՀԱՅԱՐՈՒԱԾ 1860

ԱՄԵՆԱՅԻՆ

ԳԵՂԵՑԿԱՅԵՆՈՒ ԲԻՆՍԵ

ԿԸ ԳՏԵՆՈՒԻ —

— ԴԵՂԱՐԱՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՑ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

— ՊԱՋԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ —

ԳՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լաւ Ուշադրութիւն Ընել —

— ՎԱՃԱՌԱՆԻՇԵՆ ԵՒ ՄԵՐԺԵՂ —

ԿԵՂԾ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆՁԱՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆ

ԱՌԱՆՑ ՊԻՍՄՈՒԹԻ

ԲԱՅԱՐՁԱԿԱՊԷՍ ՄԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՉ

ԹԵՐԹՕՆ «ԿԱՎՈՐՈՇ-ԾԱՂԻԿ» (2)

ԵԱՓԸՇԵԱՆ ԿԻՆԵՐԸ

Այս Թերթօնին բարոյականին դէմ եղած բոլորները չենդուրստիր։ Առական Բ. Գլ.

Ա.

Ճամբան դիմացը ելած ամէն կին, պայմանաւ որ քառասուն տարեկանը... չառ անցած չըլլար, Շաքարեանին աչքին կը թուէր խածնուելիք և ուտուելիք սքանչելի պատառ մը. բայց անյաղթելի ուժ մը կ'արգելէր զինքը իր... հրաբուխը պոռթկացնելէ։ Ի դուր ֆորմներ, բառեր կը վնասէր. երբէք չէր կրնար խօսակցութեան... թել մը բռնել։

Հետեւաբար Սահակ-Մեսրոպ Շաքարեան կը դոհանար իր կնիկը խաբելով... լոկ երեւակայութեամբ։

Ամէն անգամ որ Սահակ-Մեսրոպ իր առջին տեսներ աղւորիկ կնոջ մը քաղելը, անմիջապէս կը բռնկէր, և այս հրդեհէն... Չըրէր հրդեհէն ալ աւելի սոսկալի էր, քանի որ այս հրդեհին ի նպատակ... դրամ ալ չէին հաւաքեր։

Կը յառաջանար, քայլերը կը փութացնէր, կը դանդաղեցնէր, իր սիրտին պաշտումին առարկային առջեւէն,

ետեւէն կ'անցնէր, այդ կնոջ ամբողջ մարմինը իր աչքերուն քոտաքլին մէջ կը լուսանկարէր, և իրիկուն երբ անգամ մը տուն վերադառնալով կը փակուէր իր սենեակը, իր extra-հիմնեան սենեակը, զոր կ'անուանէր նաև... «հառաչներու գերեզման», այն ատեն սիկառ մը կը վառէր և մուխին դուրդիներուն դոյացուցած օղակներուն օդին մէջ ցնդելը դիտելով հանդերձ, կը խաբէր Արշալոյսը, իր օրինաւոր կնիկը, երեւակայութեամբ իր իշխանական նարկիլէ մը կը խմէ ինք, մինչ իր պաշտելին իր առջին... կեօպէկ կը խաղցնէ։

Այս պղտիկ աշխատութիւնը հինգ փարայի ծխախոտի, տասը և երբեմն քսան փարայի երեւակայութիւն կը նստէր իրեն և այս կերպով երջանիկ կ'ըլլար։

Ինչպէս ըսինք, Սահակ-Մեսրոպ Շաքարեան սեղանէն ելաւ. տիկինը և աղջիկը նոյնը ըրին։

Տիկին Շաքարեան հպարտ և տըժգոյն ձայնով մը հարցուց սպասուհին.

— Մարիամ, աղիքներդ լուացի՞ր։

Մարիամ աչքերուն սեւը մէջ մը պտըտցուց աչքն դէպի ձախ, վրայէ վրայ վեց անգամ բացաւ գոցեց աչքերը, բացաւ բերանը և ըսաւ.

— Բայց, հանրմ, հիւանդ չեմ որ Եանօս խմեմ։

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՇԻՇԵՐ (Verres pharmaceutique)

Դեղարաններու և դեղորայքի վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչև հիմա Հրեայ վաճառական մը մօտօք ըրած էր։ Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պողոսօֆ (Այլը Էֆէնտի խան, թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին և ունի ճոխ ու աշխատանք մթերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու և կարող է մրցիլ ամէն կերպով։ Վստահ և ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառի մեր բոլոր Հայ դեղագործները և տոկիսները պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ և այս ճիւղին մէջ մէկ հատիկ առեւտրական տունէն, քաջալերելու համար Հայ ձեռնարկուն որ միևնոյն ատեն աժանութիւնը բնարան ընտրած է իրեն։

ՄԱՍՆԱԳԻՏ ԱՍՏԱՄԱՆԱԲՈՅԺ ՏՈՒԹՈՒՄ՝ ԱՅՍԱՆԵԱՆ

Վկայեալ Բարիզի համալսարանէն, և անձնական ատամնաբոյժ երջանկայիշատակ Մուշաֆէրէտտին Շահին։

Բերա Մեծ Փողոց, ռուսական դեսպանատան դիմաց Սիթէ տը Սիրի, ուր կը դարձանէ ամէն տեսակ ալուայի, լինտի և բերնի հիւանդութիւններ վերջնական ընդունուած մէթոտներով, կեղծ ալուաներ սան քրօշէ է սան բլաք տասը տարի ապահովութեամբ։

Սոյն դարձանները կը կատարուին Գաղղիական և Ամերիկեան ամենալիքին հնարուած գործիքներով, որով ենթական՝ ամէն տեսակ գործողութիւնները պիտի ընդունի, առանց ցաւի և առանց քնացուելու։ Իարմանատունը Բարիզեան մասնագիտական վերջին օրօղէմով, իր տեսակին մէջ եղական է։ Այցելեցէ՛ք և դատեցէ՛ք։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ԼԱՍԹԻԿ

Ձմեռը մօտեցաւ, անձրեւները սկսան, հետեւաբար լասթիկները և լաւ լասթիկները կարեւոր մէկ առարկան սկսան ըլլալ դարձեալ մեղի... մահ. կանաչուներու համար։

Լաւ լասթիկ ունենալը կը նշանակէ թէ լաւ խելք ունիք և շնորհքով մարդիկ էք։ Արդ դիմեցէ՛ք, գացէ՛ք առէ՛ք Ֆրանսական այն լասթիկները որոնք շատ քիչ մնացած են և համիս կառանքիով կը տրուին։ Անցեալ տարի այս ապրանքը կամուրջին գլուխը Շերպիքիին խանութը փոքրաքանակ, իսկ Այլը Էֆ. խան, Նօ. 27 Պողոսօֆի քով կը ծախուէր մեծաքանակ. հիմայ թէ մեծաքանակ և թէ փոքրաքանակ կը ծախուի Պոլիս, Այլը Էֆ. խան, թիւ 27, տիար Մկրտիչ Պողոսօֆի գրասենեակը։

Ո՛վ Ծաղիկի և Կապույտի ընթերցողներ, վազեցէ՛ք տիար Պողոսօֆի քով և անպատճառ գնեցէ՛ք հատ մը։

Տիկին Արշալոյս ուսերը թօթուեց։ Սահակ-Մեսրոպ փայտեցաւ դոհունակ երեւոյթովը այն մարդուն, որուն մեծ հաճոյք մը կը պատճառէ իր սպասուհիին Եանօս խմելու պէտք չուունալը։ Իսկ Շուշան վար նայեալ, մինչ մայրը կը շարունակէր.

— Խաչո՛ր, շատ ապուշ ես, Մարիամ... նորէն մի՛ բարկանար, բայց շատ ապուշ ես աղջիկս։

— Շնորհակալ եմ, տիկին։

— Ձէ, շնորհակալ մի ըլլար, բայց դուն ապուշ ես... Երբ քեզի կը հարցնեմ թէ աղիքներդ լուացի՞ր, չեմ ուղեր որ խօսքս քեզ հասնաս։

— Շատ աղէկ, տիկին։

— Երբ աղիք կ'ըսեմ, քու աղիքներուդ համար չեմ։

— Շատ աղէկ, տիկին։

— Ի՞մ ըսածներս նապաստակին աղիքներն են, այն աղիքները որոնց վրայ աղջիկս բնագիտութիւն պիտի սերտէ։

Մարիամ չիկնեցաւ, ձերմկեցաւ և կարմրեցաւ։

Տիկին Արշալոյս շարունակեց.

— Հասկցա՞ր մի։

— Տի... կին... հա... նոմ... ներեցէ՛ք... ալֆ... կ'ը... նէք... այդ աղիքները չէ՞փիւրկը նետեցի։

— Ի՞նչ, չէ՞փիւրկը մի նետեցի։ Ես քեզի կ'ըսեմ կոր քի դուն ապուշ

ես, խըմպըլ ես։ Շո՛ւա, դնա՛ տղիքները առ հոս բե՛ր։

Մարիամ ինքն իր վրայ անդալ մը դառնալէ վերջ, սանդուխտի վար գլտոյեցաւ, քաջալը խիշիւ իշաւ այն 87 աստիճանները որոնց կը կաղմէին արարողմանին հինգ յարկերը, որոնց քիֆին կը բնակէին Շաքարեաններ, և պարտիզը մօտեւոր յարձակեցաւ չեօփի ամաններուն վրայ և սկսաւ տակնուվրայ դարձնել։

Ի՞նչապանը հարցուց թէ ի՞նչ կը փնտռէր չեօփի տամաններուն մէջ, մատնի՞ թէ սպարանջման։

— Օրիորդին աղիքները կը փնտռէ ու՞մ կոր, պատասխանեց Մարիամ։

Դանապանը ափիւրբան մնաց, սենեակը քաշուեցաւ և կնիկնը պատմեց սպասուհիին պատասխանը։

— Օրիորդ Շուշանի աղիքները կը փնտռեն կոր, ըսաւ։

Դանապանուհին, որ միանգամայն դերձակուհի էր, համոզուած չեղտով մը յայտնեց իր կարծիքը.

— Մարիամ կամ խնդրեցիք է և կամ պիտի խնդրենայ։

— Սա ցաւազար Շաքարեաններն են որ այս աղջիկը կ'ապուշցնեն կոր... Օրիորդ Շուշանին աղիքները փնտռել տա՛լ չօփիկին մէջ. այս մարդիկը կ'ապուշուաւ արժանի են, Աստուած վկայ։

(Շարք վաղը ԿԱՎՈՐՈՇին մէջ)